



Ջրային Ռեսուրսների Համապարփակ Կառավարման Ծրագիր

Երկիր. Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու Համաշխարհային Բանկ
Համակատարողներ IWACO (Հոլանդիա), Norconsult (Նորվեգիա)
Ժամկետները. օգոստոս 1999թ. – ապրիլ 2001թ.




Տեխնիկական առաջադրանք

1. Ջրային Ռեսուրսների Կառավարման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մշակում:
2. Ջրային Ռեսուրսների Համապարփակ Կառավարման կառուցվածքային բարեփոխման առաջարկության մշակում:
3. Ջրային ռեսուրսների մոդելավորում և վերլուծական մեխանիզմների ներդրում:

Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Ուսումնասիրվել և գնահատվել են մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսները, նրանց որակի, քանակի և մատչելիության ցուցանիշները:
- ✓ Գնահատվել է ջրօգտագործող բնագավառների փաստացի ջրօգտագործման բազմամյա շարքը և կազմվել նրանց հեռանկարային ջրապահանջի պատկերը:
- ✓ Գնահատվել է ջրային ռեսուրսների պահպանման, կառավարման ու օգտագործման ներկա կառուցվածքային, տնտեսական և քաղաքական շրջանակը, ներառյալ, քաղաքականությունը, պլանավորումը և ինստիտուցիոնալ կառուցվածքը, օրենսդրական, կանոնակարգիչ և վարչական շրջանակը, ջրի վարձավճարները, սակագները, անդրսահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ միջազգային պայմանագրերը և այլն:
- ✓ Ջրերի կառավարման կարճաժամկետ, միջին ժամկետ և երկարաժամկետ գերակայությունների բացահայտում:
- ✓ Գնահատվել է գոյություն ունեցող ջրային ռեսուրսների կառավարման ինֆրակառուցվածքը և մշակվել ջրային ռեսուրսների կառավարման կառուցվածքային բարեփոխումների առաջարկությունները:
- ✓ Ջրերի արդյունավետ կառավարման քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման պլանի հիմնադրույթների մշակում:
- ✓ Ուսումնասիրվել է կառավարման այլընտրանքային քաղաքականությունների և ռազմավարությունների ձևակերպումը և գնահատումը, որոնք նպաստում են ջրօգտագործող բնագավառների արդյունավետ զարգացումը:
- ✓ Ուսումնասիրվել է ջրի առաջարկի և պահանջարկի հետ կապված խնդիրները:
- ✓ Կատարվել է ջրային ռեսուրսների մոդելավորում Mike Basin ծրագրով երկրի և գետավազանների մակարդակով:
- ✓ Մոդելի օգտագործմամբ մշակվել են ցուցադրական 4 սցենարներ. ջրի տարբեր առաջարկի ու պահանջարկի համար, համապատասխան տնտեսական հիմնավորման մեխանիզմի կիրառմամբ:



Աշխատանքի նպատակն է.

Հայաստանի Հանրապետության Կառավարությանը տրամադրել Ջրային Ռեսուրսների Համապարփակ Կառավարման առաջարկություն, որը կընդգրկի այդ ռեսուրսների արդյունավետ պահպանման և կառավարման ջրօգտագործող բնագավառների միջև շահավետ բաշխման մեխանիզմ, ինչպես նաև համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխման կառուցվածք:

